ներկայութեամբ, և ամուսնու Նորա ամենողորմած Թագուհի Կայսերուհի Մարիա Ֆեդորովնայի, և թագաժառանգի մեծ իշխան Նիկոլայ Ալէքսանդրովիչի, և մեծ իշխան Գէորգի Ալէքսանդրովիչի, կառավարչապետի Կովկասի քաղաքական մասին իշխան Ալէքսանդր Միխայէլովիչ Դոնդուկով - Կարսակովի և Նորին սրբազնութեան Էքզարքոսի Վրաստանի Արքեպիսկոպոս Պալլատեա՝ Ներկայ էին նաեւ տահարի շինութեան վարչութեան անդամները, Վլատիմիր Պետրովիչ Բոգդէ, Ալէքսէյ Վլատիմիրովիչ Կոտենսկի, Լեվ Եւգենեվիչ Վասիլեվ, Վենեամին Ալէքսանդրովիչ Բաշկերով։ Եկեղեցու քահանաները՝ Հայր Ալէքսանդր Իւնեցկի, Գէորգի Բլագովեստնիկով, Բեդրինէ Գաբորայեվ. եկեղեցու երեսփոխան Ֆեոդոր Սիմոնովիչ Գրիգորեվ, Ակադեմիկ Մարֆելդի յատակագծող. ի Կայսրութեան Նորին Կայսերական Մեծութեան Ինքնակալ թագաւորի Ռուսաց Ալէքսանդր III ութերորդ տարում իւր թագաւորութեան. աշխարհի ստեղծագործութիւնից 7336, Քրիստոսի ծննդից 1888 հոկտեմբերի 8։

Երեկոյեան Բաղուն դարձել էր աստղալից երկինք. ամբողջ քաղաքը կատարեալ ճրագալոյց էր, առանձին փայլով աչքի էին ընկնում լուսաւորութիւնները տների, քաղաքային խորհրդի, Նորին Մեծութեան անունով դիմնազիոնի, Ս. Նունէի դպրոցական տան, կանտորան և կայարան «Կովկաս և Մերկուրի» ընկերութեան, Բաղուի նաւթագործ ընկերութեան և ծովագնաց դասի կանտորաները, արքունական պալատան են։ Ալէքսանդրեան ճանապարհը ներկայացնում էր մշտավառ լոյսից մի դիւթական շրջահայեաց պատկեր։ Բոլոր մերձակայ սարերը փայլում էին արուեստական կրակով, որոնք տպաւորում էին մի արտասովոր ազդեցութիւն։ Ոչ պակաս ազդեցիկ էր նաւահանգստի ճրագավառութիւնը. մեծաքանակ նաւերի բազմազան արհեստական ձեւով թափ թափած կրակները, որք թողում էին նայողի վերայ խոր տպաւորութիւն։ Զոգենաւերից մէկը ընկերութեան «Կովկաս — Մերկուրի»՝ յանուն Կայսր Ալէքսանդր III ի լուսաւորուած էր 3000 լապտերներով։

Վերջացնելով տաճարի հիմք դնելը Նոցին Կայսերական